

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2013թ. հունվարի 29-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ.

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական առարկայական ծրագրերին ներկայացվող պահանջների (չափանիշների) հաստատման մասին (զեկ.՝ գիտքարտուղար՝ Տ. Դավթյան, մեթոդխորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան):

2. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ա. Վաղարշյան):

3. 2012-2013 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ):

4. 2012-2013 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական առարկայական ծրագրերին ներկայացվող պահանջների (չափանիշների) հաստատման մասին (զեկ.՝ գիտքարտուղար՝ Տ. Դավթյան, մեթոդխորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Դավթյանը ներկայացրեց իրավագիտության ֆակուլտետի ուսումնական առարկայական ծրագրերին ներկայացվող չափանիշները, որոնք մանրամասն քննարկվել են Ֆակուլտետի մեթոդխորհրդում, հավանության են արժանացել և ներկայացվել ամբիոններ՝ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Ամբիոններից ստացված կարծիքները դրական են, չնայած, որ ստացվել են որոշ առաջարկություններ, որոնք ընդունվել են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հայկյանցը, Վ. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական առարկայական ծրագրերին ներկայացվող չափանիշները:

բ/ Հանձնարարել ամբիոններին մինչև սույն թվականի մայիս ամիսը ամբիոնների առարկաների գծով առարկայական ծրագրերը համապատասխանեցնել սահմանված չափանիշներին:

2. ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ա. Վաղարշյան) :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ) :

Ամբիոնների վարիչները ներկայացրեցին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման ներկա վիճակը: Ընդհանուր առմամբ դրական գնահատվեց կատարված աշխատանքները և դրանց ընթացքը: Վտանգավոր վիճակում հայտնված մեկ-երկու ուսանողներ նշեցին քաղաքացիական դատավարության, քրեական իրավունքի ամբիոնները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումներն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հայկյանը, Վ. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին դեկանի տեղակալի հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.1. ԼՍԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ երաշխավորում է հետևյալ ուսանողներին.

1. Բարսյան Նարինե (մագիստրատուրա 2-րդ կուրս)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ,

2. Դանիելյան Անի (մագիստրատուրա 1-ին կուրս)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ,

3. Նադոպյան Տիգրան (մագիստրատուրա 1-ին կուրս)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ:

5.2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արմենուհի Զիֆլիկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Արմենուհի Զիֆլիկյանի «Պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանությունը» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Արմենուհի Զիֆլիկյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Բարսեղյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հայկյանցը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Աննա Ավետիսյանի «Առևտրային գաղտնիքը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Աննա Ավետիսյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.4. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Էդգար Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատած թեմայի վերտառության փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Էդգար Հովհաննիսյանի ատենախոսության նախկինում հաստատած վերտառությունը՝ «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը Հարավային Կովկասում», վերաձևակերպել հետևյալ կերպ. «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը ՀՀ-ում»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ժենյա Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատած թեմայի վերտառության փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Ժենյա Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատած վերտառությունը՝ «Հանցագործությունների բացահայտման կամ ապացուցման հանձնարարություն կատարելը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք» վերաձևակերպել հետևյալ կերպ. «Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հիմնախնդիրները»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.6. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս Սերգեյ Մարաբյանի «Քաղաքացիական հայցի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մարգարյանը, Ս.Մեղրյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան